




Պե՞տք է դիմակ կրեմ:

Դիմակները լրացուցիչ նախազգուշական միջոց են՝ պաշտպանվելու COVID-19-ից համայնքային փոխանցում ունեցող տարածքներում: Ստուգեք ձեր տեղական նահանգի և տարածքի խորհուրդները դիմակների առաջարկությունների և պահանջների վերաբերյալ: Եթե դուք այնպիսի իրավիճակում եք, որտեղ ֆիզիկական հեռավորություն պահպանելը դժվար է, օրինակ՝ հասարակական տրանսպորտում, կարող եք որոշել դիմակ կրել:

COVID-ից գերծ մնալու համար.


- Լվացեք կամ ախտահանեք ձեր ձեռքերը
- Պահպանեք ֆիզիկական հեռավորություն (1.5 մ)
- Եղեք COVID-19-ի դեմ ամբողջովին պատվաստված
- Մնացեք տանը, եթե վատառողջ եք և թեստ հանձնեք:



Եթե դուք որոշեք դիմակ կրել.



Լվացեք ձեր ձեռքերը դիմակը դնելուց առաջ




Համոզվեք, որ այն ծածկում է ձեր քիթը և բերանը և ամբողջովին տեղավորվում է ձեր կզակի տակ, ձեր քթի կամրջի վրա և դեմքի կողքերին:



Դիմակը կրելիս կամ հանելիս մի դիպչեք դիմակի առջևի մասին: Եթե դուք դիպչեք դիմակին, անմիջապես լվացեք կամ ախտահանեք ձեր ձեռքերը: Թույլ մի տվեք, որ դիմակը կախված լինի ձեր կզակից կամ պարանոցից:



Լվացեք կամ ախտահանեք ձեր ձեռքերը դիմակը հանելուց հետո:



Լվացեք կտորից դիմակները յուրաքանչյուր օգտագործումից հետո կամ նվազագույնը ամեն օր:



*Միանգամյա օգտագործման դիմակները չպետք է նորից օգտագործել և դրանք օգտագործելուց անմիջապես հետո պետք է դնել նետել:

Կարևոր է. Քրոնիկ շնչառական հիվանդություններ ունեցող մարդիկ դիմակ օգտագործելուց առաջ պետք է դիմեն բժշկի խորհրդին:

Լրացուցիչ տեղեկատվության համար, զանգահարեք National Coronavirus Helpline **1800 020 080** հեռախոսահամարով, ընտրեք. **տարբերակ 8** թարգմանչական ծառայությունների համար կամ այցելեք **www.health.gov.au**